

— ո՞զ պահի և հաւաքը նոր 1882 թ. դժբաղպատճեցի մասն այս պահով կառութեաւ մամն ուստի միջընը... Այ ձօրւ պահ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴՈՒՇՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ*)

II.

Դաստիարակութիւն նամակագրաւուն բնութեան.

Դիւիթի սիստեմը. մանկավարժական փարձնական դպրոցներ.

Ուսուցումը եւ դպրոցը նախկին ժամանակներում.

Ներկայ դպրոցը ծնունդ է միջնադարի և միջնադարեան դըպրոցի նրա գոյութեան հիմքերը գրուած են միջնադարից մեզ հասած դպրոցական ժառանգութիւնների վրայ: Հետևապէս հասկանալի է, որ որոշ նմանութիւն, որոշ կապ պիտի լինի ներկայ և միջնադարեան դպրոցների միջև:

Ինչպէս յայտնի է, միջնադարեան դպրոցի գլխաւոր նպատակն էր՝ մարդիկ պատրաստել հասարակական այս կամ այն կոչման, պրօֆեսուիայի համար: Ուրիշ խօսքով միջնադարեան դպրոցը զուտ մասնագիտական կամ պրօֆեսսախօնէլ դպրոց էր: Դրա համար էլ այնտեղ տրւում, ուսուցանւում էին միմիայն այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ էին համարուում այս կամ այն պրօֆեսուիայի տեսակէտից: Դաստիարակութիւնը երկրորդական, երրորդական տեղ էր բռնում: Նա թողնուած էր ընտանիքին, եթէ չհաշուենք այն զօրեղ ազդեցութիւնը, որ ունէր այդ խնդրում եկեղեցին իր բազմատեսակ հիմնարկութիւններով հանդերձ:

Անկասկած, այդ տեսակ կրթութիւնը հարկաւոր կարող էր լինել միայն—այսպէս ասած—գիտնականներին, ինչպիսիք են աստուածարանները, փաստարանները և բժիշկները: Բուն ժողովուրդը, գոնէ նրա ամենաճնշող մեծամասնութիւնը, ոչ աստուածարաններից էր բաղկացած, ոչ էլ փաստարաններից կամ բժիշկներից: Հետևապէս, այդ մասնագիտական դպրոցները նրա համար չէին, այլ միայն ընտրեալների: Ժողովուրդը իր զբազմունքների վերաբերեալ զիտելիքները ձեռք էր բերում ոչ թէ դպրոցում, այլ ընտանիքում և արհեստանոցներում: Մինչև անգամ դասակար-

*) Տես «Ակրատատ» փետրուար—մարտ, եր. 188—194:

գային բնոյթ ունէր այն ամենը, ինչ ասում և գրում էր գասահարակութեան մասին, գասափարակչական գիտութեան առարկան ուսումնականների խմբակն էր միայն և ոչ թէ բուն ժողովուրդը, որի աշխատանքն ու զբաղմունքները ոչ մի առնչութիւն չունէին ժամանակի ուսումնականութեան հետ:

Սրանից, իհարկէ, չպէտք է եզրակացնել, թէ ուրեմն միջնադարում ժողովուրդը մնում էր բոլորովին անկիրթ և անդաստիւրակ, որովհետև կրթութեան և դաստիարակութեան համար հիմնուած գպրոցի դռները փակ էին նրա հանդէպ: Ո՛չ: Նա և՛ սովորում էր, և՛ դաստիարակւում: Բնութիւնը և աշխատանքն էին նրա ուսուցիչ-դաստիարակը: Աշխատելով արհեստանոցում կամ բնութեան ծոցում, նա շարունակ սովորում էր և անձնական փորձերի միջոցով գիտական ծանօթութիւններ իւրացնում: Դրա հետմիամին նա և՛ դաստիարակւում էր, որովհետև աշխատանքը, որոշնապատակով կատարող աշխատանքը, դաստիարակութեան ամենամարնական և արդիւնաւէտ գործոնն է:

Եւ որքան բարձր է փորձի սուած գիտութիւնը դպրոցի տուած գիտութիւնից: Փորձի տուածը կենդանի գիտութիւն է, իրական կեանքում գործագրելի, իսկ դպրոցինը՝ մեռած գրքի գիտութիւն է և գործնական կեանքում յաճախ անպէտք: Միւս կողմից, փորձի գիտութիւնը զարգացնում է մարդու գործնական մտածողութիւնը, իսկ գրքինը՝ ընդհակառակը, սպանելով գործնական մտածողութիւնը, զարգացնում է նրա տեսական փիլիսոփայական մտածողութիւնը:

Եթէ համեմատելու լինենք մտածողութեան այս երկու տեսակները, կտեսնենք, որ առաջինը երկրորդից շատ բարձր է: Բաւական է ընդգծել թէկուզ այն մի հատիկ փաստը, որ առաջին տիպի մտածողութեան ամբողջ ընթացքը և արդիւնքը ստուգելին գործով, իսկ երկրորդինը—ոչ: Իրաւամբ է ասուած, որ ամեն տիսակ մտքեր փոքրիկ գլխի մէջ կողք-կողքի և խաղաղ ապրում են, իսկ առարկաները ահագին տարածութեան մէջ էլ իրար հետիստ ընդհարւում են:

Մարդկային քաղաքակրթութեան պատմութիւնը մի գեղեցիկ ապացոյց է զործնական մտածողութեան գերազանցութեանու իր զարգացման երկար ու գժուարին ճանապարհի ընթացքում մարդկութիւնը միշտ հարկադրուած է եղել զործնականապէս մտածելու և զրանով էլ դաստիարակուել է: Նրա իւրաքանչիւր քայլը արդիւնք է բնութեան դէմ մզուած յամառ կոռու: Եւ բնութիւնը կոռուկով հանդերձ մարդկութեան հետ, մի ժամանակ ընձեռում էր նրան նաև այդ կոռուից յաղթական գուրս զալու համար հարկաւոր գիտելիքներն ու զէնքերը: Այդպիսով, բնութիւնը ներկա-

յանում է մարդկութեան ուսուցիչը, որը թէ ուսուցանում և թէ դաստիարակում էր նրան—թէ կառն փորձերի և ծանր աշխատանքի միջոցով:

Սա է կրթութեան և դաստիարակութեան բնական ուղին Ամեն մի դաստիարակչական սխատեմ անպայմանօրէն հիմնուած ալիտի լինի քաղաքակրթութեան պատմութեան տուած այս ցուցմունքների վրայ: Հակառակ դէպքում նա չի կարող իր նստատակներին ծառայել:

Դժբախտաբար, ներկայ դպրոցը, արհամարհելով այդ բնաշխան ճանապարհը, դաստիարակութեան համար ընտրել է մի այլ ուղի, որի ցուցիչն է միջնադարի դաստիարակութիւնը: Վերջնին մեթօդներն ու սկզբունքները վերցնելով, մի քիչ փոփոխութեան է ննջարկել և գործադրում է անշեղութեան մասնաւոր առաջնային գործադրում:

Բայց դա բոլորովին սխալ էր Գիտելիքների քանակը, որ պահանջում է այժմ ամեն մի դպրոցի աշակերտից, այլ ևս այն չէ, ինչ որ էր միջին դարերում, այս ինչ դաստուութեան ակըդրունքներն ու մեթօդները մնացել են նոյնը: Նրանք արժէքաւոր են միայն սրբազնութեան կրթութեան նեղ նպատակների տեսակէտից, իսկ ընդհանուր կրթութեան համար—անպէտք են և մինչեւ անգամ մնասակար: Միւս կողմից, հսութիւնից մեզ հասած այդ ժառանգութիւնը գիտական էլ չի կարելի համարել, որովհետեւ նրանք, այդ սկզբունքներն ու մեթօդները, անհամապատասխան են զարգացման բնական օրէնքներին:

Դաստիարակութիւն՝ համապատասխան բնութեան.

Սոյն խորագիրը կրող դաստիարակչական սխտեմը ամենից առաջ մանուկին պէտք է ծանօթացնի շրջապատի առարկաների հետ: Դա կարեոր է երկու տեսակէտից.—ա. որ մանուկն իմանայ, թէ ինչ զեր են խաղում նրանք և ինչ նշանակութիւն ունեն մարդկանց համար. բ. որ նա իրազեկ լինի մարդու դէպի այդ առարկաներն ունեցած գործնական յարաբերութեանը: Ներկայ դպրոցում այդ պահանջն իրականանալ կարող է միմիայն այն դէպքում, եթէ ուսուցման վերացական կամ տեսական ձեւը կփոխարինուի գործնականութիւնը:

Այդ նպատակին հասնելու համար պէտք է հիմնովին բարեփոխել դպրոցական ծրագրերը, ելակէտ ընդունելով ֆրեօրէլի և Պիստալօցցու հոչակած սկզբունքները: Մանկավարժութեան և ուսուցման ծանրութեան կենտրոնը պէտք է կազմի մանուկի ոյժերի և գործունէութեան զարգացման հոգսը: Ֆրեօրէլը մանկական գործունէութեան բնատուր ձգտումը համարում էր այն բանալինը

որ իր առաջ բանում էր մանուկի հոգեկան գաղտնիքների փակ դաները։ Ահա թէ ինչու նա միշտ կրկնում էր. «Ես ամեն բան սովորել եմ երեխաներից և տակաւին շարունակում եմ սովորել»։ Մի այլ տեղ էլ նա ասում է. «Դիմաւորը և էականը գործունէութիւնն է։ Մանուկն աճում և զարգանում է գործելով ու ստեղծագործելով։ Դիտելը ևս գործի մի տեսակն է։ Տեսողութեամբ իւրացուածը ծնունդ է տալիս խօսքին, իսկ խօսքը—մտքին»։

Նման գաղափարներ, միայն զանազան ձևերով արտայայտուած, մինք գտնում ենք նաև Ծուսսօի, Պեստալոցցու, Ժան-Պոլի, ինչպէս և դպրոցական նորագոյն բարենորոգիչների մօտ։ Սակայն ամենից հետեւզականը և աչքի ընկնողն է Ամերիկացի Զօն Դիւին, որը այդ սկզբունքների վրայ հիմնել է դաստիարակչական մի ամբողջ սիստեմ և ստեղծել է—այսպէս կոչուած—տեխնոլոգիկ դաստիարակութեան մի ծրագիր։

Օգտուելով հոչակաւոր Ուսուցչապետի «Դպրոցը և Հասարակութիւնը» վերտառութեամբ դասախոսութիւններից¹⁾, մենք այստեղ խոշոր գծերով կներկայացնենք նրա սիստեմի գլխաւոր հիմունքները։

Դիւիի դաստիարակչական սիստեմը.

Այս վերնագրի ներքոյ գտնուած դաստիարակչական սիստեմի ամբողջ շենքը կառուցուած է ոչ թէ տեսական սկզբունքների վրայ, այլ ունի զուտ գործնական հիմունքներ։ Դիւին իր սիստեմի բոլոր օրէնքներն էլ հանել է այն սեպհական փորձերից, որ ինքը բազմաթիւ անգամ կատարել է իր իսկ հիմնած Դաստիարակչական դպրոցում, Զիկագօի համալսարանին կից։

Ուշադրութեան արժանի է նրա մեթօդի նաև միւս կողմը։ Նա իր առաջ դնում էր, խնդիրների ձևով, որոշ պրօբլեմներ և աշխատում գործնականորեն, փորձերի միջոցով նրանց լուծումը գտնել։

Այսպէս, ամենից առաջ դրուած են եղել հետեւեալ 4 հարցելը. —

1. Ի՞նչ և ի՞նչպէս անել դպրոցը մանուկի սովորական կեանքի հետ կապելու այնպէս, որ նա՝ դպրոցը՝ դադարէր մանուկի համար այն վայրը լինելուց, ուր նա դալիս է միայն որոշ դասեր լսելու և «սովորելու» համար։

1) «Школа и Общество» профессора Джона Дьюи. Издание «Библиотеки Свободного воспитания». Москва, 1907 г. цѣна 30 коп.

2. Ի՞նչպէս բարձրացնել աշակերտի աչքում ուսուցման նիւթի իրական արժէքը, որ նա սիրով յանձն առնէր այդ նիւթը սովորելու համար անհրաժեշտ աշխատանքն ու նեղութիւնները կարծ, ի՞նչպէս անել, որ ուսուցման նիւթը լինէր տարրական գպրոցի աշակերտի համար այն, ինչ որ են համալսարանի զբաղմունքները ուսանողի համար:

3. Ներկայ դպրոցում—ինչպէս յայտնի է—ուսուցումը ոչնչով կապուած չէ մանուկ աշակերտի կեանքի ու անձնաւորութեան հետ: Սրանից էլ հետեւում է— ի՞նչպէս անել, որ ուսուցումը—առուելապէս ձևական գիտելիքների¹⁾ ուսուցումը—բղիքը մանուկի առօրեայ փորձերից և դպրոցում ձեռք բերած ունակութիւնները կազ ունենային նրա համար նշանակալից համարւող զրադմունքների հետ:

4. Ի՞նչպէս իրականացնել դաստիարակութեան անհատականացման գաղափարը:

Այս հարցերի պատասխանը Դիւին ուզում էր գտնել ոչ թէ տեսական, այլ գործնական ճանապարհով, այն է՛ փորձերի միջոցով: Իսկ սա նշանակում է ըստ Դիւիի, թէ անհրաժեշտ է դպրոցական զրադմունքները հիմնել մանուկի գործունէութեան վրայ, կամ այլ խօսքով՝ Փիզիքական աշխատանքը պէտք է դարձնել դաստիարակութեան կենտրոն:

Բնական է, որ իր խորունկ մտքի և յամառ ջանքերի յղացումը հանդիսացող դաստիարակչական այս նոր վարդապետութեան գործնական ճշմարտութիւնն ևս ամենից առաջ պիտի աշխատէր ապացուցանել ինքը, այդ վարդապետութեան հեղինակը: Եւ, յիշաւի, աշակերտի ինքնագործունէութեան զարգացումը դառնում է Դիւիի Դաստիարակչական դպրոցի հոգացողութեան ու խնամքի գլխաւոր առարկան, իսկ ձեռքի աշխատանքը—դէպ այդ նպատակի իրականացումը տանող հիմնական ճանապարհը:

Զօն Դիւիի դպրոցում ընդունուած էին ձեռարուեստի հետեւալ երեք տեսակները.—

1. Աշխատանքի նիւթն է փայտը կամ այլ կարծը մարմիններ: Այս տեսակ աշխատանքները կատարւում են գործիքների օժանդակութեամբ.

2. Խոհանոցային աշխատանք (եփել, տապակել և լու), և

3. Կարուծեային աշխատանք:

Չեռքի աշխատանքները կարեւոր են նաև նրանով, որ սերտ կազ ունեն դպրոցական ուսուցման միւս առարկաների Հւատ, —

¹⁾ 2եւական գիտելիքներ ասելով Պարսով հասկանում է, զրելը, կարդալը եւ համբաւը:

մի բան, որ կը քառեք չպէտք է մոռանալ: Այսպէս օրինակ, բնական գիտութիւնների ուսուցումը՝ առանց փորձերի անհնարին է, իսկ փորձեր կատարելն էլ, իր հերթին, պահանջում է ամենից առաջ բաւականաչափ ձկունութիւն և յետոյ՝ որ գլխաւորն է՝ ձեռների ու աչքերի մեծ վարժութիւն:

Զօն Դիւիի զպրոցում ձեռքի աշխատանքը կապւում էր մինչև անգամ պատմութեան ուսուցման հետ. աշակերտները շինում էին—նախապատմական և հին մարդու նման գործիքներ, գէնքեր, կահ-կարպաի և այդպիսով գործնականօրէն, անձնական փորձերով, ուսոււմնասիրում մարդկային պատմութեան ընթացքը:

Այստեղ մոռացուած չէր նաև մարմնի զարգացումը՝ մարմնամարզութեան և այլ ֆիզիքական վարժութիւնների միջոցով, որովհետեւ նախ՝ առողջ հօգին առողջ մարմնի մէջ միայն կարող է բնակուել, և երկրորդ՝ որ մարմնի զարգացումը գլխաւոր պայմանն է և՛ հօգեկան ու մտաւոր ոյժերի զարգացման: Դա մի անհերքելի ճշմարտութիւնն է, որի ապացուցութեան համար բաւական է յիշել թէկուզ այն մի հատիկ փաստը, որ մանուկն իր ունեցած գիտելիքների ամենամեծ մասը ձեռք է բերում Ֆիզիկական գործունէութեամբ:

Փակագծերի մէջ մի կարևոր դիտողութիւն ևս իր մտապաշտարը ֆիզիքական գործունէութեամբ նորանոր ծանօթութիւններով հարստացնելու գործողութիւնը մանուկի մէջ սկսում է շատ աւելի վաղ, քան մենք սովորաբար ենթադրում ենք, սկսում է այն ժամանակ, երբ նրա ուղեղը տակաւին անընդունակ է սիստեմատիկ աշխատանքի:

Ընդունելով Դիւիի գաստիարակչական սիստեմն անպայման կենսունակ և ողջունելի, պէտք է մի անգամ ևս համառօտակի շեշտենք ձեռարուեստի կարեւոր նշանակութիւնն այդ տիսակէտից, քանի որ ձեռարուեստի վրայ է հիմնուած այդ սիստեմի ամրող շէնքը: Առանց ձեռարուեստի մի մեռած տառ է Դիւիի սիստեմը, ձեռարուեստն է նրան կենդանութիւն և շունչ տւողը, որովհետեւ այդ սիստեմի ծանրութեան կենտրոնը մանուկի ինքնագործունէութիւնն է, իսկ այդ ինքնագործունէութեան աղքիւրը—ձեռարուեստն է: Չեռարուեստի կրթական նշանակութիւնը անժխտելի է. գերազանցօրէն դաստիարակիչ լինելու հետ միասին, միաժանակ նաև նա կրթում է միտքը և զարգացնում մարմինը:

Եւ համաձայն Դիւիի սիստեմի, ֆիզիքական աշխատանքը պիտի լինի իւրաքանչիւր գպրոցի հիմնաքարը: Այլ խօսքով, ամեն մի գպրոցի նպատակը պիտի լինի՝ կարգաւորել ֆիզիքական աշխատանքի զանազան տեսակները և նրանց ուսուցումը դնել գիտական հիմունքների վրայ: Դա նշանակում է, որ գպրոցը պէտք

է զեկավարի աշակերտների աշխատական գործունէութիւնը և չթողնի այն կոյր պատահականութեանը — ինչպէս որ այդ տեղի ունի դպրոցից դուրսը:

Այստեղից ծագում է մի նոր խնդիր, որի վրայ անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն գարձնել: Այդ այն է, որ հարկաւոր է կապ հաստատել գործնական աշխատանքի ուսուցանող տեսակների մէջ: Աշխատանքի զանազան տեսակները դպրոցում պէտք է նկատուեն ոչ թէ իրարից անկախ, անջատ-անջատ միութիւններ, այլ իրար հետ կապակցուած, մէկը միւսին լրացնող օղակներու իրաքանչիւր հետեւեալ վարժութիւնը պէտք է բղխի իր նախորդից: Իրաքանչիւր հետեւեալ վարժութիւնը պէտք է իր հետ ըերի մի նոր դժուարութիւն, սակայն այնպիսին, որին յաղթահարելու համար աշակերտն արդէն նախապատրաստուած լինէր նախորդ վարժութիւններով:

Ի հարկէ, մեր ասածներից չպէտք է եղրակացնել, որ հարկաւոր է բոլոր գործնական աշխատանքներին էլ անխռիր տեղ տալ դպրոցում: Ո՞չ դրա դէմ հէնց ամենից առաջ կրողոքէր աշխատանքների քանակութիւնը: Ընտրութիւնն անհրաժեշտ է. պէտք է ընտրել այն աշխատանքները, որոնք նախ աւելի մեծ չափով համապատասխանէին վերոյիշեալ դաստիարակչական-կրթական պահանջներին. և երկրորդ՝ յարմար լինէին աշակերտների ոյժին, մտքին ու ճարպիկութեանը: Այդ կարգին են պատկանում, օրինակ, աշակերտութեան բնակարանին, կերակրին, հագուստին և անձնական սեպհականութեանը վերաբերող աշխատանքները, որովհետև նրանք առօրեայ կեանքում չափազանց կարեոր լինելու հետ միասին, նաև աշակերտի սեպհական շահերի հետ են կապուած:

Աշխատանքի ներմուծումը դպրոցում անհրաժեշտ է նաև այլ տեսակետներից, որոնցից մի քանիսը կարեոր ենք համարում յիշատակելու այստեղ.—

1. Աշխատանքը մարզում է աշխատող մանուկի բոլոր զգայարանները և սրում է նրա յիշողութիւնն ու դատողութիւնը, սովորեցնում է նրան ջանասիրութեան ու ճշտապահութեան. իսկ որ ամենից զիսաւորն է, նա անհերքիլի կերպով համոզում է մանուկին, որ իր գործունէութեան ընթացքում պիտի զեկավարուի որոշ սիստեմով, որոշ հետեւղականութեամբ և ոչ թէ պատահական քմահաճոյքով:

2. Աշխատանքը հաղորդում է աշակերտին շատ թանգարժէք ծանօթութիւններ այս կամ այն դիտութեան մասին: Օրինակ, Դիւիի Դաստիարակչական Դպրոցում ընդունուած առաջին տիպի աշխատանքները գաղափար և ծանօթութիւններ են տալիս թուա-

բանութեան և երկրաչափութեան մասին, երկրորդ տիպինը — քիմիայի մասին, երրորդ կամ կարուձեային տիպի աշխատանքների հետ կապուած տեսական զբաղմունքները — աշխարհագրութեան մասին:

3. Աշխատանքի հետ սերտ կերպով կապուած են գիւտերը, որովհետեւ վերջիններս ոչ այլ ինչ են, եթէ մարդկային յամառ աշխատանքի ծնունդը: Հետեարար աշխատանքը և գիւտերը անսրաժանելի են: Աշխատանքի ուսուցմանը զուգընթաց, անշուշտ, պիտի լինեն նաև բացատրութիւններ գիւտերի այն ազդեցութիւնների մասին, որ գործել են նրանք մարդկութեան կեանքի ու քաղաքական հիմնարկութիւնների վրայ: Այդպիտով աշակերտները մի կողմից ծանօթութիւններ ձեռք կբերեն պատմութեան մասին, իսկ միւս կողմից՝ կնախապատրաստուեն պատմութեան ուսուցման համար:

4. Զանազան արհեստների ուսուցումը աշակերտութեանը հարկաւոր հում նիւթերի հետ — ուրեմն և բնագիտութեան տարերքի հետ — ծանօթացնելով միասին, միաժամանակ հաղորդում է նաև շատ կարեոր գիտելիքներ այդ արհեստների ծագման ու գարգացման պատմութեան մասին: Այդ բոլորից զատ, արհեստների պատմութիւնը — միացած գիւտերի պատմութեան հետ — աշակերտին ստոյդ գաղափար է տալիս այն երկար ու դժուարին ճանապարհի մասին, որով ընթացել է մարդկային քաղաքակրթութեան զարգացումը — սկսած նախապատմական մարդու վայրենական վիճակից մինչև ներկայ «լուսաւոր» կոչուած դարը:

5. Իրողութիւն կարելի է համարել այն, որ մանուկի կեանքը շատ բաներում բոլորովին նման է նախնական մարդու կեանքին: Եւ պատմութեան ուսուցումը տանելով այն ուղղութեամբ, որով ընթացել և յաջողութիւններ է գտել մարդկութիւնը, դրանով մենք դաստիարակիչ ենք դարձնում նաև մարդաբանական զբաղմունքները: Մի քանի տարի այս նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքին նուիրելուց յետոյ, նոր միայն պէտք է դիմել իսկական պատմութեան ուսուցմանը, սկսելով մայրենի երկրի պատմութիւնից, որ անմիջապէս կապուած է մարդաբանութեան հետ¹⁾: Սրանից յետոյ արդէն պիտի անցնել հին պատմութիւնը — ժամանակագրական կարգով:

Բնագիտութեան ուսուցումը աւելի դժուար է յիշեալ սկզբանքներին համապատասխան սիստեմի ենթարկել, քան պատմութեանը: Դրա համար էլ Դիւիի դպրոցում բնագիտութեան

1) Գիւիի դպրոցում պատմութեան ուսուցումը սկսվում է Ամերիկայի սկզբանքներին հնդիկների կեանքի նկարագրութեամբ:

ծրագիրը սահմանափակւում է միմիայն հիմնական դրութիւններով, սակայն այնպիսի, որ ապագայում կարող են մշակուել ամենաընդարձակ ծառալուլ: Բայտ այսմ առաջին 2—3 տարիների ընադրիտական դասընթացի զլխաւոր նպատակը պիտի լինի՝ զարգացնել մտնուելի դիտողութիւնն ու—այսպէս ասած—կարելից հետաքրքրութիւնը դէպի բոյսերն ու կենդանիները: Արա հետ շաղկապուած պիտի լինի և՛ երկրագիտութիւնը (Յամլեաթէկուէ), որովհետեւ այն ամենը, ինչ որ կենդանի է և գործարանաւոր, երկրից է ծնւռում և կրկին նրա գիշելը վերագանուում:

Այս բոլորից յետոյ արդէն ոչ միայն կարելի, այլ և անհրաժեշտ է ուսումնասիրել, թէ բնութեան ոյժերը ինչպիսի գործադրութիւն ունեն մարդու քաղաքակրթական աշխատանքին ծառայող մեքենաների շարժման խնդրում: Վերջիններիս թւում կարենուագոյն տեղերից մէկն են բռնում հաղորդակցութեան միջոցները: Այդ մասին վերաբերեալ ուսուցումը պէտք է տարուի այնպէս, որ աշակերտների աչքերի առջեռվ գան-անցնեն հաղորդակցութեան և փոխադրութեան բոլոր միջոցները, սկսած ամենապարզերից մինչև ամենաբարդերն ու ժամանակակիցները, սկսած թափառաշրջիկների սայլից մինչև օդային էլէքտրական ճանապարհները կամ էլէքտրական էլեատորները:

Հասարակ կողպէքների, ժամացոյցների և այլ նման մեխանիզմների վրայ գործադրած գործնական աշխատանքը ամենաալաւ հասապատրաստութիւնն է բնագիտութեան ինչպէս՝ նաև միքան եփելու հասարակ փորձերը շատ նպատակայամար առիթներ են ընձեռում՝ իւրացնելու տաքութեան մասին եղած կարենոր հակացողութիւնները:

Հասկանալի է, որ այս բոլոր աշխատանքները ներկայանում են ոչ որպէս ինքնին նպատակ, այլ դաստիարակչական միջոցներ, ոչ ուսուցման առարկաներ, այլ որպէս աստիճանացոյց՝ մանուկներին պարզաբանելու մարդկային համայնակեցութեան պահանջները և վերջիններիս բաւարարման այն միջոցները, որ մարդը ձեռք է բերել շնորհիւ իր հնարագիտութեան և գոյութեան բնական պայմանների ուսումնասիրութեան:

Գործնական պարագմունքների ներմուծումը դպրոցում ամենից առաջ կարևոր է նրանով, որ այդպիսով ուսուցմանը տըրուում է սօցիալական նշանակութիւն: Այսուհետեւ գիտութիւնների իւրացումը մանուկ-աշակերտի համար դառնում է մի կենսական նպատակ, դպրոցը դադարում է, կեանքից կտրուած, միայն դասերի համար պիտանի հաստատութիւն լինելուց և դառնում է նոյն կիանքի բնական և չափազանց բաղադրիչ մասնիկը:

Բացի զրանեց, գործնական աշխատանքի ներմուծումը նոո-

բողոքմ է դպրոցի ամբողջ մթնոլորտը, դպրոցը կապւում է կեանքի հետ և ներկայացնում է—թէպէտ մինիատիւր, փոքրացրած չափերով—մարդկային նոյն հասարակութիւնը, որ յարատե զարգացման ձանապարհի վրայ է զանւում:

Եզրակացութիւնը պարզ է.—հիմնական բարեփոխութեան է կարօտ դպրոցական ամբողջ կեանքը, առանց որի անկարող են իրականանալ մեր առաջադրած պահանջները Պետք է յեղաշրջման կենդանի շունչը ախտահանութեան ենթարկի հին դպրոցը, մաքրի նրա ծանրացած մթնոլորտը և թարմացնէ նրան:

Դպրոցական յեղափոխութիւնը անհրաժեշտ է:

Այդ յեղափոխութիւնը պիտի լինի նոյնքան մեծ, որքան մեծ է հասարակական կեանքում արդէն տեղի ունեցած և տակաւին շարունակող յեղափոխութիւնը:

Անկառակած, զա չի կարող լինել միանգամից, մի կամ մի քանի օրերի ընթացքում, այլ կամաց-կամաց, մեծ աստիճանաւորութեամբ: Եւ ուրախութեամբ պէտք է արձանագրել, որ այդ յեղափոխութեան—կամ տւելի ճիշտ՝ բարեփոխութեան—նախօրեակին ենք առպում մենք:

Բաւական է յիշել, որ գործնական աշխատանքները օրէցօր մեծամեծ նուաճումներ են անում դպրոցում, զուտ տեսական և ձևական զրազմունքները իրենց նախկին դիրքերից գլորուելով, երկրորդական տեղեր են բռնում, դաստիարակութեան ինգիրն սկսում է կամաց կամաց առաջնակարգ տեղ դրաւել: Այս ամենը պատահականութիւն չէ, ինարկի, այլ ազգարար՝ ապագայ բառ բնորոգութեան:

Մենք պիտի կարողանանք ըմբռնել և գնահատել այդ երևոյթը, պիտի կարողանանք ըմբռնել դպրոցական նոր հոսանքները իրենց կատարեալ նշանակութեամբ: և—որ գլխաւորն է—մենք պիտի կարողանանք այդ նոր գաղափարները դարդացնել այնպէս, որ նրանցով տողորութեամբ մեր ամրող դպրոց դպրոցական-դաստիարակչական համակարգութիւնը (սիստեմը):

Միայն այս ձանապարհով մենք կարող ենք ցանկալի ձևով լուծել իսկական դաստիարակութեան խնդիրը և սաեղծել հասարակութեան համար այնպիսի անդամներ, որոնք, ինչպէս անհատի, այնպէս էլ հասարակութեան բախտաւորութիւնն ու յառաջադիմութիւնը անհատի և հասարակութեան համագործակցութեան մէջ որո՞նէին:

Թէ ներկայ դաստիարակութիւնը այս տեսակէտից որքան պակասաւոր է—զա արեի լոյսի նման պարզ է իւրաքանչիւրի համար: Մեղանում դեռ ևս կողք կողքի թագաւորում են—մի կողմից՝ դիտութեան ու կրթութեան միակողմանի և մասնագիտացման

սկզբունքը, իսկ միւս կողմից՝ նրանց մասին եղած, համարեաթէ, միջնադարեան հասկացողութիւնները։ Մեր մանկավարժութիւնը դիմում է գլխաւորապէս—այն, թերես և բացառապէս—ուղեղին, բանականութեանը։ Նա կամենում է հարստացնել միտքը զանազան կցկտուր և մեռած դիտելիքներով։ Աշակերտի հոգին նրա համար, կարծէք, գոյութիւն չունի. Նա չի աշխատում կենդանի հետաքրքրութիւն զարթեցնել մանուկի մէջ, սովորեցնել նրան՝ ստեղծել իր հոգու խորքերից մի որ և է օգտակար և գեղարուեստական բան։

Գործնական զրադաւունքների ներմուծումը գլրոցում՝ ունի և իր թշնամիները։ Նրանք ասում են, որ ձեռարուեստների ուսուցումը, բնագիտական փորձերը և միւս նորամուծութիւնները դպրոցը—ընդհանուր կրթական դպրոցը—կդարձնեն մասնագիտական—արհեստագիտական հիմնարկութիւնն և կպատրաստեն մասնագէտներ, առանց մտքի ըստ կարելոյն, լրիւ և բազմակողմանի զարգացման։

Սակայն նրանց կարելի է պատասխանել, որ հէնց ներկայ դաստիարակութիւնն է ամենամեծ չափով նպաստում մասնագիտացմանը, որովհետեւ նա իր միակողմանիութեամբը ժխտումն է բազմակողմանի ընդհանուր կրթութեան։

Ներկայ դպրոցը, մերժելով ձեռքի և գեղարուեստական ուշ նակութիւնների զարգացման կարևորութիւնը և թշնամի լինելով գործնականօրէն ուսուցման սկզբունքին, ինքն իրան մահուան է դատապարտում, միևնոյն ժամանակ ապացուցանելով նաև իր հիմնական բարեփոխման անհրաժեշտութիւնը։

Վերմում, որպէս օրինակ նոր դաստիարակչական հիմնարկութեան, տուինք Զօն Դիւիի դպրոցի նկարագիրը. սակայն չպէտք է մոռանալ, որ նա միակը չէ. Դիւին ունեցել է իր ռահվիրաները, որոնց թւում առանձնապէս պէտք է յիշատակել գերմանացի նշանաւոր մանկավարժներին։ Ինքը Դիւին էլ խոստովանում է, որ մասնաւորապէս ֆրէօրէլը շատ մեծ ներգործութիւն է ունեցել նրա վրայի եւ խակապէս, այդ ազգեցութիւնը շատ զօրեղ կերպով երևում է Դիւիի դպրոցական ամրող սիստեմի մէջ։ Ընդհանրապէս ֆրէօրէլի—ինչպէս նաև Պետալոցցու—ազգեցութիւնը Ամերիկական նոր դպրոցի վրայ—անժխտելի է։ Բացի այն, որ գիրման մանկավարժութեան ծնունդ մանկապարտէզը Ամերիկացում կազմում է դպրոցական համակարգութեան մի կարևոր մասը, մանկապարտէզի գերմանական մեթօդն իսկ ընդունուած է Նորաշխարհի բոլոր լաւ դպրոցներում։ Շատ տեղերում ուղղակի ցանկութիւն է արտայայտուել ուսուցման ամբողջ սիստեմը հիմնել ֆրէօրէլի սկզբունքների վրայ, ինչպէս օրինակ Ս. Լուիսում, Մօր-

մանեան իւտա նահանգի մանկավարժական հետաքրքիր ցուցահանդէսում 1904 թուին:

Դիւի դպրոցին շատ նման—ըայց աւելի մեծ գաստիարակչական դպրոցներ են Հօրացիոս Մանի դպրոցը Նիւ-Եօրքում և Կոլումբի համալսարանին կից գտնվող Մանկավարժական Սեմինարիայի օրինակելի դպրոցը:

Մանկավարժութեան փորձն սկան դպրոցներ.

Մանկավարժական նման փոքրերը պահանջում են ոչ միայն հմուտ ու գաղափարական ուսուցիչներ, այլև հսկայական ծախքեր, որ անել կարող են միմիայն հեռատես կառավարութիւնները՝ եւ եթէ Ամերիկայում նորագոյն դպրոցները օրէցօր բազմանում և բարգաւաճում են, դրա ամենագլխաւոր պատճառը վերոյիշեալ բարեյածող պայմանների ներկայութիւնն է այնտեղ:

Գերմանիայում Ֆրէօբէլի գաղափարների իրականացման գործին արգելք է եղել ոչ այնքան նիւթական միջոցների պակասութիւնը, որքան պահպանողականութեան այն խոշոր գիծը, որ բատուկ է բոլոր գերման հիմնարկութիւններին —և՝ դաստիարակչական, և՝ հասարակական։ Եթէ այդ այդպէս չլինէր. գերմանական մայր հողի վրայ ևս կաճէին Ֆրէօբէլի հանճարեղ գաղափարները և կտային համապատասխան կրթական հիմնարկութիւններ։ Այդ գաղափարների սաղմերը միայն իրականացած են Գերմանիայում, այն էլ զլիսաւորապէս մասնաւոր կրթական հաստատութիւններում։ Յիշելու արժանի է ենայի համալսարանին կից գտնուող Մանկավարժական Սեմինարիան, որը սակայն կարիք ունի աւելի զարգանալու, աւելի բարգանալու, որ կարողանայ տալ այն բարերար արդիւնքը, որին շատ վաղուց արդէն հասել է Ամերիկան։

6. Տէր Յակովիքան

Bibliography.

